# Բարձրակարգ հյուրանոցային համալիրի կառուցում Ամիրյան փողոցում

**Ծրագրի նկարագիրը**

Ծրագրի նպատակն է Երևանում կառուցել բարձրակարգ հյուրանոցային համալիր: Հյուրանոցը գտնվելու է Ամիրյան փողոցում՝ Հանրապետության հրապարակի անմիջական հարևանությամբ: Համալիրում կգործեն ռեստորաններ, սրճարաններ: Այն կներառի նաև ընդարձակ կոնֆերանս դահլիճ՝ խորհրդակցությունների համար նախատեսված 3 սենյակներով և ընդունելությունների դահլիճ՝ առանձին մուտքով, ինչպես նաև հանգստի և ֆիթնեսի ընդարձակ կենտրոն՝ փակ լողավազանով: Հյուրանոցը կունենա ապրանքանիշին հատուկ Open Lobby՝ շուրջօրյա գործող ռեստորանով և բարով:

| | |
|---|---|
| **Տեխնիկական ցուցանիշներ** | Հողամասի մակերեսը կազմում է 0,425828 հա, շինարարական ընդհանուր մակերեսը՝ մոտ 26500 քմ: Համալիրը կունենա ստորգետնյա ավտոկայանատեղեր:<br>Հարկայնությունը՝ ստորգետնյա և 6-8 վերգետնյա:<br>Հյուրանոցային համարների քանակը՝ 192, ներառյալ ներկայացուցչական դասի 47 հյուրասենյակ, 17 ստուդիո և 12 սյուիթ: |
| **Ծրագրի ժամկետները** | Հյուրանոցային համալիրը շահագործման է հանձնվելու 2018թ. գարնանը: |
| **Ծրագրի արժեքը** | Ծրագրի արժեքը կազմում է շուրջ 27 մլն ԱՄՆ դոլար: |
| **Ներդրումների ձևը և հիմնական պայմանները** | Ծրագիրն իրականացվում է մասնավոր ներդրողի կողմից: Կառուցապատող՝ «Էյջ Այ Սի Դիզայն» ՍՊ ընկերություն: |
| **Ներկա իրավիճակ** | Ընթացքի մեջ են կառույցի երկաթ-բետոնե հիմնակմախքի իրականացման աշխատանքները: |